ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մ. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորումը որոշվում է նոր հասարակության տնտեսական ու սոցիալ-քաղաքական պայմաններով։ Հայտնի է, որ հասարակական կյանքը բաժանվում է գործունեության երեք հիմնական ոլորտների՝ տնտեսական, սոցիալ-քաղաքական, և հոգևոր-գաղափարական։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, կոմունիստական հասարակական հարաբերությունների ձևավորումը և նոր մարդու դաստիարակությունը՝ կոմունիստական շինարարության կարևոր խնդիրներն են։ Այս պրոցեսի միասնությունը կայանում է նրանում, որ նյութատեխնիկական բազայի ստեղծումը նախորոշում է սոցիալիստական արտադրական և հասարակական հարաբերությունների վերափոխումը կոմունիստականի, որի բազայի վրա էլ տեղի են ունենում կոմունիստական հասարակական գիտակցության հաստատումը և զարգացումը, նոր մարդու ձևավորումը։ Իր հերթին մասսաների կոմունիստական դաստիարակությունը հետադարձ ազդեցություն է թողնում հասարակական կեցության վրա, արագացնում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը և նոր հասարակական հարաբերությունների ձևավորումը։

Կոմունիստական շինարարության խնդիրների մեջ թերևս ամենաբարդն ու ժամկետայինը՝ կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման, նոր մարդու դաստիարակության խնդիրն է։

Ներկայումս սովետական հասարակության հոգևոր կյանքում տեղի է ունենում սոցիալիստական գիտակցության վերաճումը կոմունիստականի[1]։

Կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման և զարգացման պրոցեսը կատարվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո, մի կողմից որպես կոմունիզմի նյութատեխնիկական բազայի արտացոլում, մյուս կողմից՝ որպես կուսակցության, պետության, հասարակական կազմակերպությունների պրակտիկ գաղափարական դաստիարակչական աշխատանքի, հասարակության հոգևոր աշխարհի հետագա զարգացման արդյունք։ «Կոմունիստական հասարակությունը,— ասված է կուսակցության օրագրում,— ի տարբերություն բոլոր նախորդ սոցիալ-տնտեսական ֆորմացիաների, կազմավորվում է ոչ թե տարերայնորեն, այլ մարքս-լենինյան կու-

---

[1] Մարքսիստական գրականության մեջ կոմունիստական գիտակցություն հասկացողությունը օգտագործվում է երկու իմաստով՝ լայն և նեղ։ Լայն իմաստով՝ այն հասարակական գիտակցության սոցիալական և իմացաբանական նոր տիպ է, ամբողջ կոմունիստական հասարակա-տնտեսական ֆորմացիայի գիտակցությունը, որն սկսվել է ձևավորվել դեռևս բուրժուական հասարակարգի ընդերքում։ Նեղ իմաստով՝ կոմունիստական ֆորմացիայի բարձրագույն փուլի գիտակցությունն է, «իսկապես» կոմունիստական գիտակցությունը։

սակցությունների կողմից ղեկավարվող ժողովրդական մասսաների գիտակցական և նպատակասլաց գործունեության շնորհիվ»[2]:

Կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորումը կատարվում է ամենից առաջ նոր մարդու ձևավորման հիման վրա:

Սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում իրականանում է Կ. Մարքսի այն տեսական դրույթը, որ մարդիկ «իրենք իրենց վերափոխում են այն չափով, ինչ չափով նրանք նորոգում են հարստության այն աշխարհը, որը նրանք ստեղծում են»[3]:

Սոցիալիստական հեղափոխությունը մարդուն ազատագրում է շահագործողական հասարակարգի աղտեղություններից և պայմաններ ստեղծում նրա ազատ ու համակողմանի զարգացման համար: Սակայն նոր մարդու դաստիարակությունը չի ավարտվում սոցիալիզմի հաղթանակով: Միայն կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում է, որ պայմաններ են ստեղծվում կոմունիստական հասարակական գիտակցության լրիվ հաղթանակի համար:

Սոցիալիստական և կոմունիստական գիտակցությունները՝ դրանք միատիպ գիտակցության երկու էտապներն են, որոնց միջև սկզբունքորեն գոյություն ունեն այնպիսի փոխհարաբերություններ, ինչպես կոմունիստական հասարակարգի երկու փուլերի միջև:

Կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման պրոցեսը ավելի կոնկրետ բացահայտելու համար կանգ առնենք սոցիալիստական և կոմունիստական գիտակցության ընդհանուր և տարբերիչ գծերի վրա[4]: Նախ՝ սրանք ոչ թե գիտակցության երկու տարբեր տիպեր են, այլ միևնույն տիպի երկու աստիճաններ, որոնք հանդես են գալիս որպես հասարակա-տնտեսական նոր ֆորմացիայի հասարակական կեցության արտացոլում՝ հենված ընդհանուր արտադրաեղանակի, հանրային սեփականության, շահագործումից ազատ մարդկանց ընկերական համագործակցության և փոխօգնության վրա: Երկրորդ՝ նրանք ունեն ընդհանուր գաղափարական հիմք՝ մարքսիզմ-լենինիզմը: Սոցիալիստական և կոմունիստական գիտակցության գիտական բնույթը նրանց անհարիր են դարձնում ամեն տեսակի սնոտիապաշտության և մտածողության հակագիտական ձևերի նկատմամբ: Միաժամանակ սոցիալիստական և կոմունիստական գիտակցությունների տնտեսական, սոցիալական և հոգևոր ընդհանուր գծերը պայմանավորում են հասարակական գիտակցության այդ երկու ձևերի համար այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ինտերնացիոնալիզմը, սովետական հայրենասիրությունը, հումանիզմը, կոլեկտիվիզմը և հեղափոխական օպտիմիզմը: Կոմունիստական գիտակցության համար բնորոշ են նաև գործնականությունը, նպատակասլացությունը, տեսության անքակտելի կապը պրակտիկայի հետ:

Սոցիալիստական հասարակության հոգևոր կյանքի բնորոշ գծերից են սոցիալիստական հայրենասիրությունը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը:

---

2 ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, Հայպետհրատ, 1962 թ., էջ 569:

3 Из неопубликованных рукописей К. Маркса, журнал «Большевик», 1939 г., № 12—13, стр. 65

4 Այս հարցի լուսաբանմանն առաջինը անդրադարձել է ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ց. Ա. Ստեփանյանը, տե՛ս «Диалектика формирования духовной жизни коммунистического общества», «Вопросы философии», 1964, № 43, стр. 64—68 և այլն:

Սովետական հայրենասիրությունը նոր տիպի հայրենասիրություն է, որը հիմնված է հայրենիքի հանդեպ սիրո և սոցիալիստական կարգերի, կոմունիստական կուսակցության քաղաքականության նկատմամբ նվիրվածության օրգանական միասնության վրա։

Կոմունիստական գիտակցության ինտերնացիոնալիզմը երկակի է։ Նախ՝ նա ինտերնացիոնալ է իր ծագումով և բնույթով, երկրորդ՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմը կոմունիստական գիտակցության ներքին պահանջն է։

Կոմունիստական գիտակցությունը իր ոգով խորապես հումանիստական է։ Բուրժուական գաղափարախոսությունը կեղծելով մարքսիզմի և կոմունիզմի հումանիստական բնույթը, փորձում են հումանիզմը հակադրել կոմունիզմին։

Նորահայտ «մարքսիստ» Ա. Կյունցլին իր «Օտարացված դրախտը» գրքում համաձայնվելով, որ ՍՄԿԿ ծրագրում առաջ քաշված տնտեսական խնդիրները կլուծվեն, փորձում է դրանց հակադրել Մարքսի հայացքներին։ Նա նշում է, որ ՍՍՀՄ-ի տեխնիկական առաջադիմությունը դառնում է ինքնանպատակ և այդ ֆոնի վրա «կորչում է Կ. Մարքսի հումանիստական հայացքների նշանակությունը»։

Կոմունիստական հումանիզմը որակապես տարբերվում է նախորդ հումանիստական հայացքներից, նա հաղթահարում է նրանց միակողմանիությունը և սահմանափակությունը։

Կոմունիստական գիտակցության մեջ առաջին անգամ իրականացվում է հասարակականի և անհատականի ներդաշնակ համակցումը։ Նրան հատուկ է կոլեկտիվիզմը։ Կոմունիստական գիտակցության մեջ իր լուծումն է գտնում անհատի և հասարակության՝ բաղմադարյան կոնֆլիկտը։ Ի հակադրություն բուրժուական լուսավորիչների «բանական էգոիզմի» էթիկայի, կոմունիստական գիտակցությունը զինավարվում է այն սկզբունքով, որ ճիշտ հասկացված հասարակական շահը, միաժամանակ հանդիսանում է անհատական շահ։ Կոլեկտիվիզմը, որպես սոցիալիստական և կոմունիստական գիտակցության արտահայտություն, սկզբում հանդես է գալիս որպես պրոլետարական բարոյականության հիմնական հատկանիշներից մեկը։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո, կոլեկտիվիզմը պրոլետարական բարոյականության գլխավոր սկզբունքից վեր է ածվում ամբողջ հասարակության բարոյականության գլխավոր սկզբունքի և դրա հետ միասին դադարում է միայն բարոյական լինելուց, դառնում է սոցիալիստական հասարակության հոգևոր կյանքի բնորոշ առանձնահատկություններից մեկը։ Կոմունիզմի դեվիզն է «մարդը մարդուն ընկեր է, բարեկամ, եղբայր»։

Կոմունիստական գիտակցությունը իր բնույթով նաև օպտիմիստական է։ Մեր օրերի բուրժուական գիտակցությանը, որին հատուկ է վախը վաղվա նկատմամբ, հուսահատությունը և պեսիմիզմը, կոմունիստական աշխարհայացքը հակադրում է օպտիմիզմ, կենսունակություն, հավատ մարդու և նրա ապագայի նկատմամբ։

Արդի բուրժուական գիտակցության անհեռանկարությունը ստիպված են ընդունել նրա գաղափարախոսներից շատերը։ Ու. Լիպպմանը «Նյուսուիկ» ամսագրում վերջերս գրել է, որ շատ ամերիկացիներ կորցրել են հավատը ազատ, դեմոկրատական հասարակության հիմնական սկզբունքների նկատմամբ. «Նիհիլիզմ, օտարացման, էգոիզմի, վհատության, լքման տրամադրությունները.

այս ամենը ցույց են տալիս Ամերիկյան հասարակության մեծագույն հույսերի կրախը»[5],— գրում է նա։

Ամերիկյան պրոֆեսոր Լ. Խեյլբրոները, իր «Ապագան որպես պատմություն» գրքում հատուկ գլուխ է հատկացրել այդ հարցին, բազմանշանակորեն այն վերնագրելով «Ամերիկյան օպտիմիզմը փակուղու առաջ»[6]։

Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Դ. Բելը ավելի հեռու է գնում. նա իր «Գաղափարախոսության վախճանը» գրքում ստիպված է խոստովանել, որ բուրժուական գաղափարախոսությունը, որ երբեմնի «գործողության ճանապարհ էր հանդիսանում, այժմ դարձել է մեռած փակուղի»[7]։ Նա գրում է, որ գաղափարախոսությունը կարող է համախմբել և իր ետևից տանել մարդկանց, եթե համապատասխանում է երեք պայմանների՝ 1. առաջ է քաշում պարզ գաղափարներ, 2. ճշմարտության հավակնություն ունի, 3. նշում է գործողության նպատակը և ուղին.

Այդ պայմանների պատասխանը տալիս են կոմունիստական գաղափարախոսությունը և աշխարհայացքը։ ՍՄԿԿ ծրագրում նշված է, որ «բուրժուական ուսմունքները և դպրոցները չդիմացան պատմական ստուգմանը։ Նրանք չկարողացան և չեն կարող գիտական պատասխան տալ կյանքի առաջ քաշած հարցերին»[8]։

*

Մասսաների սոցիալիստական գիտակցությունը ձևավորվում է այնպիսի պայմաններում, երբ դեռ շարունակվում է պայքարը հանուն սոցիալիզմի հաղթանակի, և այդ պատճառով նա անբաժանելիորեն տիրապետող չէ հասարակության հոգևոր կյանքում։ Ճիշտ է, նա ներգրավում է հասարակության մեծամասնությանը, սակայն շահագործողական դասակարգերի մնացորդները թշնամաբար են տրամադրված դեպի սոցիալիզմը և նրա գաղափարները։ Սոցիալիստական գիտակցությունը դեռևս դասակարգային գիտակցություն է՝ բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության գիտակցություն։ Կոմունիստականը՝ գիտակցության զարգացման որակական նոր էտապ է։ Սոցիալիզմի լրիվ և վերջնական հաղթանակից հետո նա աստիճանաբար դառնում է համաժողովրդական գիտակցություն։ Եթե մասսաների սոցիալիստական գիտակցությունը սկսում է ծագել ու զարգանալ կապիտալիզմի ընդերքում, որպես բուրժուական գաղափարախոսության ուղղակի ժխտում, ապա կոմունիստական գիտակցությունը ձևավորվում է սոցիալիզմի հաղթանակի պայմաններում, սոցիալիզմից կոմունիզմին անցման էպոխայում, սոցիալիստական գաղափարախոսության հիմքերի ու սկզբունքների պահպանման և հետագա զարգացման հիման վրա։

Մասսաների կոմունիստական գիտակցության հիմքում ընկած է մարդկանց նոր վերաբերմունքը դեպի աշխատանքը, որպես առաջին կենսական պահանջ։ Սակայն կոմունիզմի պայմաններում ոչ միայն փոխվում է մարդկանց վերաբերմունքը դեպի աշխատանքը, այլև նրանց արտադրական գոր-

---

[5] The Nuwsweek, 23—X—67.

[6] R. Heilbroner, The Future as History, New York, 1960, pp. 55—61.

[7] D. Bell, The End of idiology, Glencow, 1960, p. 370.

[8] ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, Հայպետհրատ, 1962 թ., էջ 472։

ծունեության պրոցեսի բնույթը։ Եթե մասսաների սոցիալիստական գիտակցությունը ձևավորվում է ֆիզիկական և մտավոր աշխատանքների միջև գոյություն ունեցող հակադրությունների պայմաններում, ապա կոմունիստական գիտակցությունը բնութագրվում է ֆիզիկական և մտավոր աշխատանքների միջև էական տարբերությունների վերացմամբ, ֆիզիկական և մտավոր աշխատանքների ներդաշնակ զուգորդմամբ։

Կոմունիստական գիտակցության համար բնութագրիչ է անձնական և հասարակական շահերի լրիվ ներդաշնակությունը։ Կոմունիզմը նոր էջ է բացում անհատի և հասարակության փոխհարաբերությունների միջև։ Սոցիալիստական հեղափոխությունը դնում է այդ նոր փոխհարաբերությունների սկիզբը, սակայն նրանց լրիվ ծաղկումը հնարավոր է միայն կոմունիզմի պայմաններում։

Սոցիալիզմի պայմաններում դեռևս «մնած» տարածություն գոյություն ունի հասարակական գաղափարախոսության և հասարակական հոգեբանության միջև։ Հասարակական հոգեբանության տրադիցիոն պահպանողականությունը սոցիալիզմի ժամանակ մեկ անգամից չի հաղթահարվում։

Մարդկանց գիտակցության վրա առանձնապես ճնշում է հին սովորությունների և տրադիցիաների բեռը։ Կ. Մարքսը պատկերավոր ձևով նկատում է, որ «բոլոր մեռած սերունդների տրադիցիաները, որպես մղձավանջ, ծանրանում են կենդանի սերունդների մտքերի վրա»[9]։

Այսպիսիք են սոցիալիստական և կոմունիստական հասարակական գիտակցության տարբերիչ մի քանի առանձնահատկություններ[10]։ Հասկանալի է, որ որքան խորը ճանաչենք կոմունիստական գիտակցության գծերը, առանձնահատկությունները և զարգացման տենդենցները, այնքան ավելի հաջող կընթանա մասսաների կոմունիստական դաստիարակության գործը։

*

Կոմունիզմի կառուցման ընթացքում հանդես են գալիս կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման և զարգացման մի շարք օրինաչափություններ։ Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ հասարակական գիտակցությունը ամենից առաջ հանդիսանում է հասարակական կեցության արտացոլումը։ Այս ընդհանուր սոցիոլոգիական օրինաչափությունը գործում է նաև կոմունիստական ֆորմացիայի ձևավորման և զարգացման պայմաններում։ Հայտնի է, որ սոցիալիզմի նյութական հիմքերը առաջանում են կապիտալիզմի պայմաններում։ Սակայն սոցիալիզմը, որպես հասարակական-տնտեսական ֆորմացիա, չէր կարող ծագել կապիտալիզմի օրոք, որովհետև նա վերջին հաշվով հանդիսանում է կապիտալիստական կարգերի բացասումը։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո դեռ մի որոշակի պատմական ժամանակաշրջանում «ո՞վ-ում»-ի հարցը մնում է լուծված, միայն սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը՝ ինդուստրացումը, կոլեկտիվացումը և կուլտուրական հեղափոխությունը հիմք ծառայեցին կապի-

---

9 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 281։

10 Կարծում ենք, որ ճիշտ է Վ. Վ. Ժուրավլյովը, երբ իր «Основные закономерности развития коммунистического общественного сознания» գրքում (էջ 104—105) նշում է, թե այսօր, երբ կոմունիստական հասարակարգի բարձրագույն փուլի ձևավորումը նոր է սկսվել, սոցիալիստական և կոմունիստական գիտակցությունների տարբերությունները հնարավոր է առանձնացնել միմիայն ամենաընդհանուր գծերով։

տալիզմի հանդեպ վճռական հաղթանակի համար։ Սոցիալիզմի լրիվ և վերջնական հաղթանակից հետո մեր երկրում սկսվում է կոմունիզմի շինարարության էպոխան։ Հասարակական կեցության այս երեք վիճակներին համապատասխան սոցիալիստական գիտակցությունը անցել է ծագման և զարգացման հետևյալ երեք հիմնական էտապները.

1. Մարքսիստական հեղափոխական գիտակցության ծագումն ու զարգացումը կապիտալիզմի պայմաններում։

2. Սոցիալիստական գիտակցության ձևավորումն ու զարդացումը ՍՍՀՄ-ում սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման և նոր հասարակական հարաբերությունների հաղթանակի հետևանքով։

3. Կոմունիստական հասարակական գիտակցության առաջացումն ու ձևավորումը կոմունիզմի կառուցման պրոցեսում։ Ժողովրդական մասսաների կոմունիստական գիտակցությունը ձևավորվում և զարգանում է ծագող կոմունիստական հասարակական կեցության, նոր հասարակական հարաբերությունների ամբողջ սիստեմի ակտիվ արտացոլման պրոցեսում։ Գիտակցության զարգացման ներքին օրենքները գործում են միայն կոմունիստական հասարակական կեցության հիման վրա։

Կոմունիստական հասարակական գիտակցության հիմքում ընկած է կոմունիզմի նյութատեխնիկական բազան։ Այն ձևավորվում և զարգանում է նոր հասարակական հարաբերությունների ողջ սիստեմի, առաջին հերթին, տնտեսական հարաբերությունների հիման վրա։ Նրա ընդհանուր իմացաբանական-օրինաչափության ուսումնասիրության ժամանակ (կեցությունն է որոշում գիտակցությունը) ուշադրություն է գրավում հասարակական կեցությունից, հասարակական գիտակցության ետ մնալու հարցը կոմունիզմի պայմաններում։

Կպահպանվի՞ արդյոք հասարակական կեցությունից հասարակական գիտակցության ետ մնալը կոմունիզմի օրոք։ Անհրաժեշտ է տարբերել այդ հարցի երկու կողմերը՝ իմացաբանական և սոցիալական։ Գիտակցության կեցությունից ետ մնալը գոյություն է ունեցել բոլոր հասարակարգերի պայմաններում։ Կոմունիզմի ժամանակ ևս հասարակական կեցության բոլոր կողմերը (առանձնապես գիտության և կուլտուրայի բուռն աճի պայմաններում) չեն կարող արտացոլվել մի անգամից, լրիվ և ադեկվատ։ Հետևաբար, իմացաբանական իմաստով, գիտակցության ետ մնալը կեցությունից կպահպանվի նաև կոմունիզմի օրոք։

Հասարակական գիտակցությունը հասարակական կեցությունից ետ մնալու սոցիալական տենդենցը կապված է դասակարգային հասարակության, ֆիզիկական և մտավոր աշխատանքների հակադրության հետ, այն կոմունիզմի օրոք, ըստ ամենայնի, գոյություն չի ունենա։ «Որքան ավելի բարձր է հասարակության անդամների գիտակցականությունը, այնքան ավելի լրիվ ու լայնորեն է ծավալվում նրանց ստեղծագործական ակտիվությունը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, աշխատանքի կոմունիստական ձևերի և մարդկանց միջև նոր հարաբերությունների զարգացման մեջ և, հետևապես, այնքան ավելի արագորեն ու հաջողությամբ են լուծվում կոմունիզմի կառուցման խնդիրները»[11]։

---

11 ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, Հայպետհրատ, 1962 թ., էջ 539։

Անհրաժեշտ է նշել, որ սոցիալիստական գիտակցության ձևավորումը և նրա վերաճումը կոմունիստականի, տարերային պրոցես չէ, որը պասսիվորեն արտացոլում է մարդկանց գիտակցության մեջ նյութական կյանքի օբյեկտիվ պայմանները, այլ կուսակցության, պետության ու հասարակական կազմակերպությունների սիստեմատիկ և նպատակասլաց գործունեության արդյունք է։ Չի կարելի ճշգրիտ ժամկետներ նշանակել նոր գաղափարների տարածման ու հաղթանակի համար, սակայն կարելի է, և պետք է ուղղություն տալ հասարակական գիտակցության զարգացմանը։

Կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափություններից մեկը, մարքս-լենինյան աշխարհայացքի տիրապետության հաստատումը և նրա անշեղ զարգացումն է՝ նոր տեսական պրոբլեմների ընդհանրացման հիման վրա։ Պատմական զարգացման տարբեր ասպիճաններում գիտակցությունը ձևավորվում է ոչ թե դատարկ տարածության մեջ, այլ հանդիսանում է նախորդ սերունդների նվաճումների օրինաչափ շարունակությունը։ Կոմունիստական գիտակցության այնպիսի գծեր, ինչպիսիր են ժողովրդայնությունը, դեմոկրատիզմը, հումանիզմը, լավատեսությունը և այլն, նախորդ ֆորմացիաների հոգևոր կյանքի առաջադեմ կողմերի հետագա շարունակությունն ու զարգացումն են։

Մասսաների մեջ առաջավոր ու հետևողական մարքս-լենինյան աշխարհայացքի արմատավորումը կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման կարևորագույն պայմանն է։

ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Սոցիալիզմի և կոմունիստական հասարակարգի կառուցման պայմաններում... առաջնակարգ նշանակություն է ստանում սովետական հասարակության բոլոր աշխատավորների գիտական աշխարհայացքի ձևավորումը մարքսիզմ-լենինիզմի, որպես փիլիսոփայական, տնտեսագիտական և սոցիալ-քաղաքական հայացքների մի ամբողջական ու կուռ սիստեմի հիման վրա։ Կուսակցությունը խնդիր է դնում ամբողջ բնակչությանը դաստիարակել գիտական կոմունիզմի ոգով, ձգտելով, որ աշխատավորները խորապես ըմբռնեն համաշխարհային զարգացման ընթացքն ու հեռանկարները, ճիշտ հասկանան երկրի ներքին և միջազգային ասպարեզի իրադարձությունները, գիտակցաբար կառուցեն կյանքը կոմունիստական ձևով»[12]։

Աշխատավորների գիտական աշխարհայացքի ձևավորման գործում հսկայական դեր է խաղում քաղաքական ուսուցումը, որը մեր երկրում վեր է ածվել մասսաների զաղափարական-տեսական կրթության համաժողովրդական համալսարանի։ Սովետական մարդկանց գաղափարական կոփման հիմքում ընկած են Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունները, ՍՄԿԿ ծրագիրը, մեր կուսակցության փաստաթղթերը։ Սովետական իշխանության տարիներին Վ. Ի. Լենինի աշխատությունները ՍՍՀՄ-ում լույս են տեսել 330 մլն. 691 հազար, Մարքսի և Էնգելսի աշխատությունները՝ 83 մլն. 788 հազար օրինակ տպարանակով։ Գիտական աշխարհայացքի ձևավորման, կոմունիստական կուլտուրայի և բարոյականության համար հսկայական նշանակություն ունի գրքերի, ամսագրերի, թերթերի հրատարակությունը։ 1918—1966 թթ. ՍՍՀՄ-ում լույս է տեսել 31 միլիարդ օրինակ գիրք, իսկ ամսագրերի տիրաժը 1913 թ. համեմատ աճել է 17, թերթերինը՝ 34 անգամ[13]։

---

12 Նույն տեղում, էջ 540—541։

13 «Страна Советов за 50 лет», стр. 290, М., 1967.

Որո՞նք են կոմունիստական գաղափարախոսության առանձնահատկությունները։

1. Կոմունիստական գաղափարախոսությունը գիտական գաղափարախոսություն է, այն ճիշտ է բացատրում հասարակական կյանքի զարգացման երևույթները և նշում է մարդկության հետագա առաջընթացի ուղիները։

2. Կոմունիստական գաղափարախոսությունը, որպես բանվոր դասակարգի գաղափարախոսություն, արտահայտում է բոլոր աշխատավորների շահերը։ Միայն բանվոր դասակարգի գիտական և հեղափոխական գաղափարախոսությունը կարող է դառնալ և իրոք դառնում է համաժողովրդական գաղափարախոսություն։

3. Կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման վճռական պայմաններից մեկը կոմունիստական կուսակցության ղեկավարությունն է։ Եթե մարքսիզմ-լենինիզմը կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման տեսական հիմքն է, ապա ՍՄԿԿ քաղաքականությունը նրա գաղափարական միասնության գլխավոր պայմանն է։

Եթե բուրժուական հասարակության պայմաններում և, անգամ, կապիտալիզմից սոցիալիզմին անցման էպոխայում մարքս-լենինյան գաղափարախոսությունը հիմնականում պրոլետարական է, ապա սոցիալիզմի լրիվ և վերջնական հաղթանակի պայմաններում նա դառնում է համաժողովրդական գաղափարախոսություն, հանդիսանում նրա սոցիալ-քաղաքական ու գաղափարական միասնության մարմնավորումը։

Կոմունիստական հասարակարգի պայմաններում գաղափարախոսությունը կդառնա հասարակության բոլոր անգամների շահերի կոնցենտրացված տեսական արտահայտությունը։

Կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման և զարգացման գլխավոր օրինաչափություններից մեկը անհաշտ պայքարն է բուրժուական գաղափարախոսության դեմ։ Աշխատավոր մասսաների կոմունիստական դաստիարակության պրոցեսը ընթանում է երկու աշխարհների գաղափարական պայքարի պայմաններում, կապիտալիզմի քաղաքական, ռազմական և գաղափարական դիմադրության իրադրության մեջ։ Սոցիալիզմի կառուցման ընթացքում ժողովրդական մասսաների գիտակցության մեջ տեղի է ունենում հեղաշրջում, իսկ սոցիալիզմի հաղթանակով հաստատվում է ամբողջ հասարակության միասնական սոցիալիստական գաղափարախոսություն։ Բայց սոցիալիզմի հաղթանակից հետո էլ մարդկանց գիտակցության և վարքագծի մեջ պահպանվում են կապիտալիզմի մնացուկներ, որոնք խանգարում են կոմունիզմի առաջընթացին։

Կ. Մարքսը գրում է, որ սոցիալիզմը «...Բոլոր տեսակներից, թե տնտեսական, թե բարոյական, թե մտավոր, գեռ կրում է իր վրա այն հասարակության դրոշմը, որի ընդերքից նա դուրս է եկել»[14]։

Կոմունիզմի կառուցման շրջանում պայքարը բուրժուական գաղափարախոսության դեմ մտնում է նոր փուլ։ Այս տեսակետից հատկանշական է ամերիկյան սենատոր Սպարկմենի հայտարարությունը. «Սովետական Միության վիճակի փոփոխությունը,— գրում է նա,— հնարավոր է միայն որպես ներքին էվոլյուցիայի արդյունք։ Այն բանի համար, որ այն դառնա իրականություն,

---

[14] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հնտբր երկեր, հ. 2, էջ 17։

անհրաժեշտ է մեր գաղափարական ներգործությունը սովետական մարդկանց վրա»[15]։

Սակայն իմպերիալիզմի գաղափարախոսությունը կանգնած է լուրջ դժվարությունների առաջ։

ՍՄԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումի (1968 թ.) որոշման մեջ նշված է. «...պատմական զարգացման ժամանակակից էտապը բնութագրվում է կապիտալիզմի և սոցիալիզմի միջև գաղափարական պայքարի սրմամբ», «...կրելով լուրջ ցնցումներ և խոշոր ձախողումներ ներքին և արտաքին քաղաքականության մեջ, իմպերիալիզմը, և հատկապես հերթին ԱՄՆ-ի իմպերիալիզմը, ռազմական, քաղաքական բնագավառում ավանտյուրաների դիմելուց բացի ավելի ու ավելի մեծ ջանքեր է գործադրում սոցիալիստական երկրների կոմունիստական և ամբողջ դեմոկրատական շարժման դեմ քաղաքական ու գաղափարական բայքայիչ պայքար մղելու համար»։

Արդի գաղափարական պայքարում իմպերիալիզմը հատուկ հույսեր է կապում սոցիալիստական երկրներում մարքսիզմի գաղափարախոսության ներքին քայքայման, «էրոզիայի» հետ։ Հակակոմունիզմի մի շարք տեսաբաններ՝ Ու. Ռոստոուն, Ռ. Արոնը, Ֆ. Պերրուն, Պ. Սորոկինը, Ա. Շլիդինգերը (կրտսեր), հանդես են գալիս սոցիալիստական և բուրժուական գաղափարախոսությունների «հաշտեցման» կոչերով, հայտարարում սոցիալիզմ և կապիտալիզմ հասկացությունները «հնացած»։

Արդի կապիտալիզմի գաղափարական կյանքում ամենից ավելի մոդայիկը «միասնական ինդուստրիալ հասարակության» կոնցեպցիան է։ 1960 թ. հրատարակվեց Ու. Ռոստոուի «Տնտեսական վերելքի ստադիաները» գիրքը, որը միաժամանակ կրում էր «Ոչ կոմունիստական մանիֆեստ» հավակնոտ ենթավերնագիրը[16]։ Գրքի նպատակն էր հերքել հասարակա-տնտեսական ֆորմացիաների մասին մարքս-լենինյան աշխարհայացքը, նրան փոխարինելով «ստադիաների տեսությամբ»։

Նշված, ինչպես նաև «կամուրջների միակցման», կապիտալիզմի և սոցիալիզմի «կոնվերգենցիայի» և այլ տեսությունների նպատակն է փրկել բուրժուական գաղափարախոսությունը վերջնական փլուզումից, հակադրվել բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի տեսությանը, սոցիալիզմը տարրալուծել կապիտալիզմի մեջ։

Մեկանում բուրժուական գաղափարախոսությունը պարարտ հող է գտնում հակահասարակական տարրերի, բնակչության հետամնաց և անգիտակից մասի շրջանում, այն արտահայտվում է մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների ձևով։

Վ. Ի. Լենինը նշել է, որ «երբ մահանում է հին հասարակությունը, նրա դիակը չի կարելի ամփոփել դագաղի մեջ և դնել գերեզման։ Նա քայքայվում է մեր միջավայրում, այդ դիակը նեխում և վարակում է մեզ»[17]։

Սոցիալիզմի օրոք բուրժուական գիտակցության մնացուկները դրկված են իրենց ամբողջությունից, սիստեմավորված ձևից, նրանք գոյություն ունեն միայն տարերայնորեն, կոնֆլիկտի մեջ մտնելով կյանքի հետ։ Սովետական մարդկանց գիտակցության և վարքագծի մեջ կապիտալիզմի մնացուկների պահ-

[15] «Правда», 11 апреля, 1968 г.

[16] W. Rostow, The Stages of Economic Growth. A Non-Communist. manifesto. Cambrige, 1960.

[17] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 340։

պանման հարցում կան կարծիքներ, որոնց հետ չի կարելի համաձայնվել։ Նրանցից մեկը՝ կապիտալիզմի մնացուկների առկայությունը բացատրում է սոցիալիզմի բնույթով, նրա բաշխման եղանակով, նյութական շահագրգռվածության սկզբունքով, ապրանք-դրամական հարաբերություններով, աշխատավորների մի մասի ունեցած օժանդակ տնտեսությունների գոյությամբ[18]։ Մյուսը այդ բանը տեսնում է հասարակական կեցությունից հասարակական գիտակցության ետ մնալու մեջ[19], մինչդեռ կապիտալիզմի մնացուկների պահպանումը պետք է բացատրել ընդհանուր և մասնավոր, օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ պատճառներով։ Կապիտալիստական շրջապատը և կեցությունից գիտության ետ մնալը ընդհանուր նախադրյալներ են, որոնցից բացի յուրաքանչյուր առանձին դեպքում կապիտալիզմի այս կամ այն մնացուկի առկայությունը բացատրվում է որոշակի պատճառներով, արտադրողական ուժերի զարգացման անբավարար մակարդակով, կապիտալիզմից մնացած սոցիալ-տնտեսական կարգի մնացուկներով, հասարակական հոգեբանության պահպանողականությամբ, ամբողջ հասարակության հասարակական գիտակցության և որոշ մարդկանց անհատական գիտակցության հակադրությամբ, մեր գաղափարական աշխատանքներում տեղ գտած թերություններով, սուբյեկտիվիզմով, վարչարարությամբ և այլն։

Այսպիսիք են կոմունիստական հասարակական գիտակցության ձևավորման և զարգացման մի քանի օրինաչափությունները։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ КОММУНИСТИЧЕСКОГО ОБЩЕСТВЕННОГО СОЗНАНИЯ

М. М. АКОПЯН

Резюме

В период развертывания коммунистического строительства происходит формирование коммунистического сознания.

В статье указывается, что формирование коммунистического сознания и воспитание нового человека являются одной из важнейших задач строительства коммунизма. Формирование коммунистического сознания определяется экономическими и социально-политическими условиями нового общества.

В статье подробно рассматриваются некоторые закономерности формирования и развития коммунистического общественного сознания, в частности действие общесоциологической закономерности отражения общественного бытия общественным сознанием и его особенности при коммунизме, значение определяющей роли марксистско-ленинской теории в деле формирования коммунистического сознания.

В статье подробно говорится также о значении непримиримой борьбы против буржуазной идеологии, как о важной закономерности формирования и развития коммунистического сознания.

---

[18] С. Ковалев. Пережитки капитализма в сознании людей при социализме, журнал «Коммунист», 1957 г., № 3; В. С. Орлов. Субъект преступления, М., Юриздат, 1958 г.

[19] Пережитки прошлого в сознании советских людей, БСЭ, т. 32, стр. 409—410.